նի ձիաւոր հայ առաջնորդները հեռուից տեսնում են հայրենի լեռը՝ «Մասի՛սը, Մասի՛սը» կանչում են, թէ՝ նրանց աչքերը ի տես սուրբ լերան փայլում են ուրախութիւնից, որի հանդէպ նրանք մանկական ակնածանք են տածում»:

Ապա իմանում ենք, որ երբ Վագներ մի քանի ամիս յետոյ Ուրմիայից Սալմաստի վրայով կրկին գալիս է պարսիկ-տաճկական սահմանը, այդ կողմերը վտանգուած են լինում աւելի քան երբեք՝ քուրդ աւազակաբարոյ ցեղերի ձեռքից:

Առհասարակ այդ կողմերը Քրդստան է անուանում Վագներ:

Վագներ շատ գոհ է, հպարտ, որ ինքն է առաջին անգամ այդ կողմից Արարատի լանջի վրայ ոտք դնող գիտնական ճամբորդը, որ՝ իրենից առաջ եւ ոչ մէկ գիտուն ճամբորդ եւ ոչ մի ուղեւոր այս կողմերում ոտք չէ դրել: Բայց նա զերծ չէ երկիւղից, թէ՝ մի գուցէ աւազակաբարոյ քրդերը իր կեանքին վտանգ սպառնան: Նա չէ մոռացել իր նախորդներից ոմանց՝ Youbert-ի, Schulz-ի եւ Brawn-ի տխուր ճակատագիրը նոյն այդ վայրերում:

Ինչպէս Մասիսի հիւսիսային, այնպէս նաեւ այս՝ հարաւային լանջերի համար Վագներ յատկանշանական է համարում աղբիւրների, ջրի կատարեալ պակասը: «Լերան այս կողմում ծառեր ամենեւին չկան: Մնացած բուսականութիւնը կրում է միջին-եւրոպական բնոյթ: Տակաւին Թուրնըֆորը, առաջին բնախոյզը, որ Արարատ սարն այցելեց, զարմացած էր մնացել այն մեծ նմանութեան վրայ, որ կայ նրա եւ մեր միջին-եւրոպական լեռների բուսականութեան մէջ»:

Մասիսի հարաւային լանջերին երկու օր մնալուց յետոյ Վագներ վերադառնում է Բայազիտ եւ այնտեղից էլ ճամբան շարունակում դէպի Էրզրում: Ամբողջ չորս ամիս շարունակ Հայաստանի, Քրդստանի եւ Պարսկաստանի ալպեան տեսարանը դիտելուց կշտացել էի թէեւ, բայց էլի չէի ուզում բաժանուել»...

* * *

Յուլիս 1-ին (1843) Վագներ, դարձեալ Աբովեանի (եւ ուրիշների) ուղեկցութեամբ, Էջմիածնից ճամբայ է ընկնում՝ Արագած սարը բարձրանալու նպատակով: Նրա ասելով՝ «Հայաստանի գրեթէ անծանօթ այդ շրջանը մինչ այն ուեւէ եւրոպացի ճամբորդ այցելած եւ նկարագրած չէ եղել, թէ՝ Պարրոտ եւ Ֆոխ միայն անցել են այդ կողմերով, Արարատի ճամբայով: Իսկ մի ուրիշը, Carteron, թէեւ Արագածի վրայ եղել է, բայց՝ չէ նկարագրել այն:

Աշտարակում հիւրասիրւում են Աբովեանի հետ ծանօթ Ստեփան աղայի տանը: Գիւղը իր այգիներով դուր է գալիս Վագներին: Բնակիչներն էլ եղել են բարեկեցիկ ու գոհ իրենց վիճակից:

Հակառակ Մասիսի՝ գերման ճամբորդի աչքին դարնում է Արագածի ջրաշատ, աղբիւրաշատ ու կանաչաւէտ լինելը: Հիացք է պատճառում մանաւանդ լերան ալպեան բուսականութիւնը՝ իր չքնաղ դեղեցկութեամբ: Վագներ բնականաբար Արագածի վրայ եւս ահագին նիւթ է հաւաքում իր բնապատմական հետազօտութեանց համար:

Նա ծանօթանում է լերան լանջերին տարածուող Աբարան գաւառակի հայ բնակչութեան կենցաղին ու վիճակին, միաժամանակ վերյիշելով նոյն այդ բնակչութեան գաղթի համառօտ պատմութիւնը: Գաղթը տեղի է ունեցել 1829 թ. Հին Բայազիտի շրջանից:

Այդտեղից, ինչպէս նաեւ Վանից, Էրզրումից, Կարսից եւ Թոփրաք-Կալէից Անդրկովկաս գաղթած հայերի թիւը Վագներ այս կապակցութեան մէջ հաշւում է 14,000 ընտանիք կամ 90,000 շունչ (համեմ. այս յօդուածի Ա. գլուխը), իսկ պարսկ. Ատրպատականից եկածների թիւը՝ աւելի քան 8,000 ընտանիք: Վերջին թիւը միսիոնար Ely Smith-ի վկայութեամբ 9,000 եղած պիտի լինի, ասում է Վ., իսկ իրենց տեղում մնացած հայ ընտանիքների թիւը՝ 2,500:

Արարատի նորեկ հայ գիւղացիներին մանրամասն հարցուփորձ անելով եւ անձամբ դիտելով նրանց կենցաղը՝ Վագներ ստանում է այն տպաւորութիւնը, թէ իրենց հին բնակավայրը նորով փոխարինած լինելով բախտաւոր չեն եղել նրանք: «Տաճկական հողի վրայ նրանք հարկաւ, շարունակ հեծում էին փաշաների ճնշումներից ու կեղեքումներից, ինչպէս նաեւ քրդերի աւազակութիւններից, եւ սակայն հին բնակավայրը աւելի մօտ էր նը-